Զգուշության փող

Trumpet's Sound

49-ՐԴ ՏԱՐԻ, ԿԱՎԱՏՐԱԼԻԱ
ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2018

Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren. org
URL: www. acmaust. org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույուճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Յանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խաղաղություն և հույս ..... Հովիվ՝ Հրաչ Գույուճյան

Գնալ Եգիպտոս ..... Դոն Սթորմըր

Բոլոր բաները բարիի գործակից են ..... Պատ. Աբրահամ Սարգիսյան

Մեր առաջնահերթությունները ..... Մանկանց ավետ. ընկ.

Կատարի՛ր առաջին քայլը ..... Ռեքս Տիրլավ

Եկեղեցու պատմությունը (1) ..... QMBC պանորամա

Նրանց հրավիրի՛ր եկեղեցի ..... Հովիվ՝ Հովսեփ Հովսեփյան

Ապաշխարեցե՛ք ..... Հովիվ՝ Ռաֆֆի Զափարյան

Հարությունն անհնար է կորցնել ..... Քաղված

Քաջացի՛ր, քանզի Աստված ապահովում է ..... Դոկտ. Զեսլով Բասսարա

Աստծո արդարությունը ..... Պատ. Փոլ Հայտոսթյան

Խաչի ազատարար շուքը ..... Քաղված

Խաղաղություն և հույս

Հեռուստացույցով հավանաբար տեսել եք հայտնի հաղորդումներ, որտեղ մարդիկ նիհարում են կամ ունենում են պլաստիկ վիրահատություն, կամ գնում են թանկարժեք նորաոճ հագուստներ...: Բայց ի՞նչ ասենք հոգու մասին: Ո՞վ կարող է վերափոխել այն, ո՞վ կարող է փոխել և նորոգել մեզ Քրիստոսի մեջ: Ո՞վ կարող է վերցնել մեր մեղքի բեռը, սրտի դատարկությունն ու մեր ունեցած տխրությունը: Դիմում ենք ոգելից խմիչքին, պարին ու խրախճանքին, սակայն հաջորդ օրը նույնն ենք: Ո՞վ կարող է օգնել ինձ, ո՞վ կարող է փրկել ինձ: Հիսուսը միակն է, ով կարող է շտկել ու նորոգել մեր կոտրված սրտերը: Նա կարող է հեղաշրջել մեր ամբողջ կյանքը: Այս ամենը տեղի է ունենում, երբ մենք արդարանում ենք Հիսուս Քրիստոսով: Քրիստոսը մեզ նոր կյանք է տալիս Աստծո հանդեպ մեր ցուցաբերած վստահության և Իրեն հավատալու շնորհիվ: Նա արդարացնում է մեզ, խաղաղություն ու հույս է պարգևում: Կարդացե՛ք Հռոմեացիներին 5:1-11-ը:

«Հետևաբար հավատով արդարացած լինելով, խաղաղություն ունենք Աստծո հետ, մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով. ում միջոցով նաև հավատով մուտք ունենք այս շնորհի մեջ, որի մեջ մենք կանգնած ենք և ուրախանում ենք Աստծո փառքի հույսով: Եվ ոչ միայն այսքանը, այլ նաև՝ պարծենում ենք նեղությունների մեջ, գիտենալով, որ նեղությունը համբերություն է առաջ բերում, և համբերությունը՝ փորձառություն, փորձառությունը՝ հույս: Եվ հույսը չի ամաչեցնում, որովհետև Աստծո սերը մեր սրտերում սփռված է Սուրբ Հոգու միջոցով, որ մեզ տրվեց: Որովհետև, երբ մենք դեռ տկար էինք, իր ժամանակին Քրիստոսը մեռավ ամբարիշտների համար: Որովհետև, հազիվ թե արդարի համար որևէ մեկը մեռնի, (թերևս գտնվի մեկը, որ բարի մարդու համար համարձակվի մեռնել), բայց Աստված Իր սերը մեզ հայտնեց դրանով, որ երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեռավ մեզ համար: Ուրեմն, որքան ավելի հիմա, արդարացած լինելով Նրա արյամբ, կփրկվենք բարկությունից Նրա միջոցով: Որովհետև, երբ դեռ թշնամի էինք, Աստծո հետ հաշտվեցինք Իր Որդու մահով, որքա՜ն ավելի հիմա, երբ հաշտված ենք, փրկվելու ենք Նրա կյանքով:

Եվ ոչ միայն այսքանը, այլ նաև ուրախանում ենք Աստծով մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով, որով մենք հիմա հաշտություն ընդունեցինք» (Հռոմ. 5:1-11):

Երբ դատապարտված անձն արդարացվում և ազատ է արձակվում, այդ օրը նրա կյանքի ամենաերջանիկ օրն է լինում: Նա, ով հույս չուներ, այժմ հույս ունի, ով ուրախություն չուներ, այժմ ուրախություն ունի: Որքա՜ն մեծ է այն շնորհքը, որ նրան ազատ արձակեց:

Ինչպիսի՞ն է վիճակդ այսօր: Ուրա՞խ ես: Աստծո կատարյալ խաղաղությունը վայելո՞ւմ ես կյանքիդ մեջ: Արդյոք տեսնո՞ւմ ես Նրա շնորհքի մեծությունը, գիտե՞ս Նրա հետ լինելու հավիտենական հույսի մասին:

Եթե կյանքիդ մեջ չես փորձառել այսպիսի փոփոխություն, ապա հիմա ժամանակն է, որ Փրկչին մոտենաս և խնդրես Նրան մաքրել քեզ քո մեղքերից և ազատ արձակել: Երբ ՈՐԴԻՆ ազատի ձեզ, դուք ճշմարտապես ազատ կլինեք:

Թո՛ղ որ Քրիստոսի ուրախությունը բնակվի քո կյանքում:

Հ. Գ.

Գնալ Եգիպտոս

Ծննդոց 12:10-20

Աբրահամը եկավ այնտեղ, որտեղ Աստված ուզում էր, որ նա լինի, սակայն շուտով դժվարության հանդիպեց: Նա տեղափոխվեց երկրի հարավային մաս, բայց սովի հանդիպեց: Ղովտի հետ մեկտեղ շարունակեց դեպի հարավ տեղաշարժվել և շուտով հասավ Եգիպտոսի սահմանը: Նշենք, որ Աստված Աբրահամին չէր պատվիրել տեղաշարժվել: Ուստի Աբրահամն ինչո՞ւ էր շարունակում հարավ շարժվել: Արդյոք պե՞տք չէր, որ մնար այնտեղ, որտեղ ապրում էր: Ի՞նչն էր Եգիպտոս գնալու սխալը: Մենք պետք է զգույշ լինենք, որ չդատապարտենք Աբրահամին, սակայն մեր առաջ քաշած հարցը մեր կյանքում մեծ նշանակություն ունի, և

կարևոր է այդպիսի հարց տալը և իմանալը, թե ինչպես պետք է վարվենք կյանքի նման պարագաներում:

Գուցե չկարողանանք պատասխանել այս հարցերին, ուստի ե-կե՛ք մեր մտքերը կենտրոնացնենք Աբրահամի՝ Եգիպտոս գնալու վրա: Նա գիտակցեց, որ կենսական խնդրի առջև է կանգնած. այն վերաբերում էր իր կնոջը: Սա ուրիշ տեսակի խնդիր է, քան շատ տղամարդկանց պատկերացրածը, երբ մտածում են իրենց կանանց մասին որպես խնդրի աղբյուրի: Աբրահամի խնդիրն այն էր, որ իր կինը դեռևս գեղեցիկ էր նույնիսկ վաթսունհինգ տարեկան հասակում, ուստի վախենում էր, որ Եգիպտոսում ինչ-որ մեկը կարող էր սպանել իրեն՝ իր կնոջը տիրանալու համար:

Ուրեմն Աբրահամն ի՞նչ արեց: Չկա որևէ նշում այն մասին, որ նա դիմեց Տիրոջ օգնությանը կամ առաջնորդությանը: Նա ինքնուրույն խնդրին լուծում տվեց: Աբրահամը Սառային խնդրեց, որ մարդկանց ասի, թե իր քույրն է, որպեսզի ինքը ողջ մնա:

Աբրահամի կյանքից գիտենք, որ այս խոսքը ճշմարիտ է: Ինքը և Սառան նույն հորից էին, բայց տարբեր մայրերից: Բայց Աբրահամը սխալ տպավորություն ստեղծելու համար էր օգտագործում ճշմարտության մի մասը: Իրականում նա սուտ էր ասում: Մենք նույնպես պետք է զգույշ լինենք, թե ինչպես ենք ներկայացնում ճշմարտությունը: Կան պահեր, երբ մեր ասածը ճշմարիտ է, բայց ասում ենք ճշմարտության մի մասը, այն, որը մեզ ավելի լավ տեսանկյունից է ներկայացնում: Երբ այդպես ենք վարվում, հետևանքները կարող են այնքան աղետալի լինել, կարծես թե մեծ ստախոս լինեինք: Ավելի ուշ կվերադառնանք այս մտքին:

Հարցը, որ մեր մտքում ծագում է, հետևյալն է. «Ի՞նչ եղավ Աբրահամի հավատքի հետ»: Այս գլխի սկզբի հատվածներում կարդում ենք Աստծո՝ Աբրահամին տված խոստման մասին: Աստված նրան մեծ ազգ էր դարձնելու, և երկրի բոլոր ազգերը նրանով էին օրհնվելու: Սակայն պատմության այս փուլում Աբրահամը զավակներ չուներ: Եթե նա մեծ ազգի հայր էր դառնալու, ապա պետք է ողջ մնար այնքան ժամանակ, մինչև որ առնվազն մեկ զավակ ունենար: Հետևաբար, եգիպտացիներն ինչ էլ մտածեին իր և իր

կնոջ մասին, չպետք է նրան վախեցներ. Աստված դեռ որոշ ժամանակ պահպանելու էր իր կյանքը:

Եթե սխալ ճանապարհ ենք բռնում, ապա պետք է ակնկալենք ամեն տեսակի խնդիրներ: Այդ խնդիրներից մի քանիսը կարող են իրական լինել, իսկ մեծամասնությունը՝ հավանաբար մեր երևակայության արդյունքը: Այնուհետև մենք փորձում ենք նախապատրաստվել այդ թվացյալ խնդիրներին և նախապես լուծումներ մշակել: Մի՞թե ավելի լավ չէ մնալ այնտեղ, որտեղ Աստված մեզ տեղավորել է և վստահել Նրան, որ առաջնորդի մեզ:

Աբրահամի պատկերացրածն իսկապես տեղի ունեցավ: Եգիպտացիները նկատեցին Սառայի գեղեցկությունը և զեկուցեցին փարավոնին: Սառան տեղափոխվեց թագավորական պալատ: Սակայն պատմության ընթացքում հասկանում ենք, որ Աբրահամի իրական մտավախությունն այն մասին, որ իրեն գուցե սպանեն, իրականությանը չէր համապատասխանում: Երբ փարավոնն իմացավ ճշմարտությունը, չափազանց զայրացավ Աբրահամի վրա: Նրա խոսքերից կարող ենք հասկանալ, որ Աբրահամի մտավախությունը պարզապես իր երևակայության արդյունքն էր: Եթե փարավոնն իմանար, որ Աբրահամն ու Սառան ամուսիններ էին, երբեք Սառային չէր տանի իր պալատ:

Սակայն Աբրահամը մի քանի ձևով վատ դրության մեջ հայտնվեց: Նա պատրաստ էր փոխզիջման գնալ, և իր կնոջ մաքրությունն արատավորել՝ իր սեփական անվտանգությունն ապահովելու համար: Սա իրակա՞ն սեր է: Արդյոք պե՞տք չէ, որ նա ամեն գնով հոգար իր կնոջ մասին: Միայն սեփական անձի մասին մտածելը հոգատար ամուսնու տպավորություն չի թողնում:

Բացի այդ, Աբրահամը թերևս մտածում էր, թե իր ռազմավարությունը լավ է գործում: Ինքը ողջ էր. փարավոնն իրեն արջառներով, ուղտերով, էշերով, ծառաներով ու աղախիններով է հարստացրել: Սակայն մեկ բան ևս պետք է նկատի ունենալ: Նյութական հաջողությունները երբեք չպետք է հոգևոր բարօրության հաշվին ձեռք բերել: Ի՞նչ արժեք ունի նյութական հաջողությունը, երբ մեր վկայությունն արատավորված է մեր փոխզիջման պատճառով:

Կես ճշմարտությունն Աբրահամի վրա թանկ նստեց: Փարավոնն ինչ-որ կերպով հասկացավ, որ իրեն պատահած լուրջ հարվածները Սառայի պատճառով էին, և որ Սառան Աբրահամի կինն էր: Ինչ-որ կերպով փարավոնը հասկացավ, որ իր հետ պատահածներն Աստծո դատավճիռն էին, ուստի կանչեց Աբրահամին իր մոտ: Նա՝ Աբրահամին մեղադրելով, ասաց. «Այս ի՞նչ արեցիր դու ինձ»: Այս մարդն իր ամբողջ ընտանիքով տառապում էր մեկ մարդու եսասիրական ծրագրի պատճառով: Հեթանոսը հանդիմանեց կենդանի Աստծո ծառային: Եթե հավատացյալն անապաշխար մարդու կողմից իրավացիորեն հանդիմանվում է, ուրեմն չափազանց լուրջ խնդիր կա: Սա այնպիսի բան է, որը երբեք չպետք է տեղի ունենա:

Աբրահամը արտաքսվեց երկրից: Նա շատ լուրջ դաս սովորեց: Դրանից հետո նրա մասին այլևս չենք կարդում, որ երբևէ փափագ ունեցավ կրկին Եգիպտոս վերադառնալ: Այնուամենայնիվ, կտեսնենք, որ Եգիպտոսում գտնվելու այդ ժամանակաշրջանը նրա վրա մեծ հետևանքներ թողեց: Այո՛, Աբրահամը Եգիպտոսից դուրս եկավ, բայց Եգիպտոսը մնաց Ղովտի սրտում: Նա շուտով ընտրելու էր Հորդանան գետի հովիտը, քանի որ այն շատ նման էր եգիպտացիների երկրին: Եվ հավանաբար, սա այն ժամանակահատվածն էր, երբ Սառան Հագարին ստացավ որպես աղախին:

Այս ամենից ի՞նչ դաս կարող ենք սովորել: Ցավալի է, որ այն բոլոր բաները, որոնք մեր կյանքում անում ենք առանց Տիրոջը հարցնելու, հնարավոր է, որ որոշ ժամանակ անց նեղեն մեզ: Ուստի կարևոր է, որ Տիրոջը մոտ լինենք և ամեն քայլափոխի Նրա առաջնորդությունը փնտրենք:

Շատ կարևոր է նաև բաց և ազնիվ լինել մարդկանց հետ: Ճըշմարտության մի մասն ասելը աղետալի հետևանքներ կարող է ունենալ: Այն, ինչ ասել ենք, հնարավոր է, որ ճշմարտությունն է, բայց եթե ճշմարտությունը որևէ կերպ շեղել ենք, ապա մեր բարի վկայությունը վտանգի ենք ենթարկել աշխարհի առջև, որը աչքերը չորս բացած՝ մեզ հետևում է: Անհավատները հավանաբար

շատ արագ մատնացույց կանեն մեր թերությունները, և այդպիսով մեր հավատակիցների վկայությունն արատավորած կլինենք:

Դոն Սթորմըր

Բոլոր բաները բարիի գործակից են

«Եվ Հովսեփն ասաց իր եղբայրներին. «Ի՛նձ մոտեցեք, խնդրո՛ւմ եմ»: Նրանք էլ մոտ եկան, և ասաց. «Ես ձեր եղբայր Հովսեփն եմ, որին ծախեցիք Եգիպտոս: Եվ հիմա մի՛ վշտացեք ու մի՛ նեղսրտեք, որ ինձ ծախեցիք այստեղ, որովհետև Աստված կյանք փրկելու համար է ինձ այստեղ ուղարկել ձեզնից առաջ: Որովհետև երկրիս վրա սովի երկրորդ տարին է հիմա, և դեռ հինգ տարի կա, որ վարուցանք ու հունձք չի լինելու: Եվ Աստված ինձ ձեզնից առաջ ուղարկեց, որ երկրի վրա ձեզ համար սերունդ պահի և ձեր կյանքերը փրկի մեծ ազատագրմամբ: Եվ արդ, ոչ թե դուք ուղարկեցիք ինձ այստեղ, այլ Աստված, և ինձ՝ Փարավոնին հայր և նրա ամբողջ տանը տեր և ամբողջ Եգիպտոս երկրին կառավարիչ կարգեց: Շտապ իմ հոր մոտ գնացե՛ք և ասացե՛ք նրան. «Այսպես է ասում քո որդի Հովսեփը. «Աստված ինձ ամբողջ Եգիպտոսին տեր դարձրեց. ինձ մո՛տ իջիր. մի՛ հապաղիր» (Ծնն. 45:4-9):

Ռաբբի Ագիպան բարեպաշտ մի հրեա էր, որ հալածանքի պատճառով ստիպված էր լքել իր քաղաքը: Իր ամբողջ հարստությունը ճրագ էր՝ իր Սուրբ Գիրքը կարդալու, մի աքաղաղ՝ նրան արթնացնելու, և մի էշ՝ նրան ծառայելու: Մի օր, երբ թափառում էր, երեկոյան մի գյուղ գընացաց՝ այնտեղ գիշերելու համար: Սակայն գյուղացիները, շատ անգութ գտնվելով, նրան գյուղից վռնդեցին: Ուստի ստիպված էր գյուղից դուրս որևէ տեղ գիշերել: Երբ ճրագը վառած Սուրբ Գիրք էր կարդում, թեթև քամին մարեց այն: Երբ քնում էր, մի աղվես իր աքլորին փախցրեց, և հետո մի առյուծ իր էշին հափշտակեց: Սակայն Ռաբբի Ագիպան երբեք չտրտնջաց: Նա հավատում էր, որ Աստված սիրում

է իրեն և ինչ որ անում է, իր բարիքի համար է: Հաջորդ առավոտյան, երբ գյուղ գնաց, իմացավ, որ ավազակները, մտնելով գյուղ, կողոպտել են բնակիչներին ու ծեծել նրանց, ուստի հասկացավ նախախնամության կարգադրությունը և Աստծուն փառք տվեց:

Սրա համար սրբազան առաքյլան ասում է. «Գիտենք նաև, որ բոլոր բաները միասին բարուն են գործակից նրանց համար, ովքեր սիրում են Աստծուն և կանչված են ըստ Նրա նախասահմանության» (Հռոմ. 8:28):

Սիրելի՛ Երկնավոր Հայր, գիտեմ, որ Դու ամենակարող Աստված ես, և Քեզ սիրողներին ինչ էլ պատահի, բարիի գործակից կդարձնես: Փա՛ռք Սուրբ անվանդ: Ամեն:

Վերապատվելի՝ Աբրահամ Սարգիսյան
Քաղված՝ «Օրեօր» գրքից

❋ ❋ ❋

Առակաց 4:1-9

Որդինե՛ր, լսեցե՛ք հոր խրատը և ուշադի՛ր եղեք, որ ճանաչեք իմաստությունը: Քանի որ ձեզ լավ ուսմունք եմ տալիս, իմ օրենքը մի՛ լքեք: Քանի որ ես իմ հոր որդին էի, փափուկ ու մեկհատիկ՝ մորս աչքին: Նա սովորեցնում էր ու ասում ինձ. Քո սիրտը թող ընկալի՛ իմ խոսքերը, պահի՛ր իմ պատվիրաններն ու ապրի՛ր: Իմաստությո՛ւն ձեռք բեր, հասկացողությո՛ւն ձեռք բեր, մի՛ մոռանա ու բերանիս խոսքերից մի՛ շեղվիր: Մի՛ լքիր նրան, ու նա քեզ կպահպանի: Սիրի՛ր նրան, ու նա քեզ կպաշտպանի: Գլխավորն իմաստությունն է, ուստի իմաստությո՛ւն ստացիր, ստացած ամեն ինչիդ հետ հասկացողությո՛ւն ստացիր: Մեծարի՛ր նրան, ու նա քեզ կբարձրացնի, երբ նրան ընդունես, քեզ պատիվ կբերի: Նա քո գլխին շնորհի զարդ կտա, փառքի թագ կպարգևի քեզ:

Մեր առաջնահերթությունները

Երեխաների հետ աշխատողների առաջնահերթություններն են կամ պետք է լինեն ներքոնշյալները.

- Առաջին առաջնահերթությունը Աստծուն **երկրպագելն է և սերն առ Աստված:**
- Երկրորդ առաջնահերթությունը, ըստ կարևորության, նրա **ընթացքն է** Աստծո առաջ և աշխարհի մեջ:
- Երրորդ առաջնահերթությունը նրա **գործն է** Աստծո համար և նրա աշխատանքը երեխաների հոգիների համար:

Երկրպագություն → ընթացք → աշխատանք:

Բայց քանի կա այսպիսի առաջնահերթությունների սանդղակ, որը կարիք ունենք հասկանալու և գործնականում օգտագործելու, մենք նաև կարիք ունենք հիշելու, որ այս **երեք** գործողություններն էլ կարևոր են և իրենց կարևոր դերն են խաղում քրիստոնյայի կյանքում և ծառայության մեջ: Ուստի պետք է համոզված լինենք, որ անհավասարակշիռ չենք դառնում կյանքում, չենք շեշտադրում այս գործողություններից մեկը՝ անտեսելով մնացածը.

- Եթե քրիստոնյան կապված է միմիայն իր աշխատանքին, ապա նա ակտիվիստ է:
- Եթե նա կապված է իր քայլերի հետ, ապա նա ինքնամփոփ է:
- Եթե նա միմիայն երկրպագության մեջ է ակտիվ, ապա նա միստիկ է կամ խորհրդապաշտ:

Մենք կարիք ունենք տեսնելու, թե որքան կապված են այս գործողությունները միմյանց հետ: Մեր **աշխատանքը** Աստծո համար կախված է մեր քրիստոնեական ընթացքից, կամ մեր **ընթացքն** Աստծո առաջ կախված է մեր **երկրպագությունից**:

Մանկանց ավետարանչության ընկերակցություն

Կատարի՛ր առաջին քայլը

«Եթե մեր եկեղեցու առաջնորդները..., ապա մենք իսկապես հաջողությունների հասած կլինեինք»: Նախադասության մեջ բաց թողած հատվածը կարող եք լրացնել ձեր իսկ խոսքերով: Հավանաբար բաց թողած հատվածում կգրեիք՝ աստվածաշնչային ավելի լավ սերտողություններ պատրաստեին, ավելի արդյունավետ հովվություն անեին: Գուցե ավետարանչության կամ պաշտամունքի ձևի հետ կապված միտք արտահայտեիք: Ինչպես ես, հավանաբար դուք նույնպես լսել եք անհամար քննարկումներ այն մասին, թե ինչպես պետք է վարվեն եկեղեցու առաջնորդները:

Նման զրույցներից հետո բազմիցս տուն եմ վերադարձել կատարելապես հիասթափված և անօգնական: Այնպիսի տպավորություն կա, որ եթե առաջնորդական կամ ազդեցություն ունեցող դիրքի վրա չես, ապա անզոր ես կատարելու որևէ նշանակալի փոփոխություն: Եկեղեցում կյանքն այլևս գրավիչ չէ, ձեզ համար այն իմաստ չունի, մինչև որ «նրանք փոփոխություններ չիրականացնեն այնտեղ»: Իհարկե, այն առաջնորդները, որոնք Աստծո և իրենց շրջապատող մարդկանց հետ մտերիմ հաղորդակցություն ունեն, քրիստոնեական համայնքի հոգևոր կյանքի համար կենսական նշանակություն ունեն: Առանց լավ առաջնորդության՝ եկեղեցին մեծ վնասներ է կրում: Սակայն մտածելը, թե ամեն բանի համար միայն եկեղեցու առաջնորդներն են պատասխանատու, իր մեջ ունի թաքնված վտանգ: Հրաշալի իրականությունն այն է, որ մեզանից յուրաքանչյուրը կանչված է՝ մեկս մյուսի կյանքում ճշմարիտ հոգևոր առաջնորդություն կատարելու: Երկու կամ ավելի մարդկանց միջև եղած յուրաքանչյուր փոխազդեցություն իր մեջ պարունակում է հոգևոր առաջնորդության թաքնված հրավեր: Մտածե՛ք, թե ինչպես Քրիստոսն առաջնորդեց հուսալքված աշակերտներին, մինչ նրանք տխուր գնում էին Էմմաուս գյուղ: Կարդացե՛ք Ղուկասի ավետարանում գրված այս պատմությունը և կտեսնեք, թե ինչպես Քրիստոսը նախաձեռնությունն Իր վրա վերցրեց, մտավ նրանց հուսահատված դրության մեջ և հույս պարգևեց: Սա է ճշմարիտ առաջնորդությունը: Երբ մենք մեզ վրա վերցնենք

մեկս մյուսի կյանքը բուժող նախաձեռնությունը, իրականում օգտագործած կլինենք հատուկ տեսակի հոգևոր առաջնորդություն:

Մտածե՛ք այսպիսի հոգևոր առաջնորդության կարևորության մասին, որտեղ երկու մարդ ունեն կոտրված հարաբերություն: Առաջնորդին վայելող քայլ է առաջինը ներում խնդրելը կամ ներելը: Այդ առաջին քայլն անողը նախաձեռնությունն իր վրա է վերցնում: Սա է հոգևոր ճշմարիտ առաջնորդությունը:

Պատկերացրե՛ք մի իրավիճակ, երբ տեսնում եք որևէ մեկին՝ լուրջ խնդրի մեջ հայտնված: Ձեր առջև դրված է առաջնորդություն կատարելու երկընտրանք: Կարող եք աչք փակել նրա դժվարության վրա, խնդիրը զգուշորեն անտեսել և քաղաքակիրթ կերպով հեռավորություն պահպանել, կամ ձեր հարմարավետությունը մեկ կողմ դնելով՝ ինչ-որ կերպով նրա բեռը թեթևացնելու պատրաստակամություն հայտնել: Սա հոգևոր առաջնորդության և նախաձեռնության քայլ է:

Մենք հակված ենք թերագնահատելու այն ազդեցության չափը, որը կարող է կիրառվել մեկս մյուսի հանդեպ ամենօրյա հարաբերության մեջ: Նույնիսկ քաջալերական պարզ խոսքն իր մեջ առաջնորդության ինչ-որ տարր է պարունակում: Հեշտ է չնախաձեռնող կյանք ապրել և խույս տալ որևէ մեկին քաջալերելու պարտականությունից: Իսկական քաջալերությունը կարող է փոխել կյանքի ուղղությունը կամ զորացնել ծառայությունը: Քրիստոնյա որոշ խորհրդատուներ պնդում են, թե իրենց խորհրդատվական աշխատանքի 75-90%-ի կարիքը չէր լինի, եթե եկեղեցում մարդիկ իրար քաջալերեին:

Ճշմարիտ առաջնորդությունը ներառում է վտանգի դիմելու և առաջին քայլը կատարելու ցանկություն: Այսպես անելով՝ դուք կարող եք մեկ ուրիշի կյանքում բուժող փոփոխություն առաջացնել:

Ռեքս Տիրլավ

❋ ❋ ❋

Եկեղեցու պատմությունը (1)

մ.թ. 100-1517 թթ.

1. Ներածություն

Այս և հաջորդող մի քանի սերտողություններում կփորձենք դիտարկել մ.թ.100-թ.-ից մինչև մեր օրերն ամբողջ աշխարհում դավանող քրիստոնեական եկեղեցու տարածումը: Մենք այն անվանում ենք դավանող քրիստոնեական եկեղեցի, քանի որ մեծամասամբ այն չի հետևել Աստվածաշնչի ուսմունքներին, մասնավորապես՝ Նոր Կտակարանում արձանագրված առաքյալների ուսմունքներին: Շատերը պնդում էին, թե քրիստոնյա են, սակայն իրենց կյանքը չէր համապատասխանում իրենց ասածներին:

Մինչ դիտարկելու ենք եկեղեցու պատմությունը, շատ կարևոր է, որ Քրիստոսի անունով մարդկանց կատարած քայլերը համեմատենք Աստծո Խոսքում ուսուցանվածի հետ, որը միակ ճշմարիտ չափանիշն է: Կլինեն գործողություններ, որոնք համապատասխանում են Աստծո Խոսքին, և մենք կարող ենք դա ընդունել մեր կյանքում, սակայն մյուս կողմից կլինեն նաև գործողություններ, որոնք հստակորեն հակասում են Աստծո Խոսքին, և դրանցից պետք է խուսափել:

Շատ գրքեր են գրվել եկեղեցու պատմության մասին, որոնցից շատերը կողմնակալ ու կոնկրետ հարանվանության դավանանքի պաշտպանության տեսանկյունից են գրված: Գրողները հաճախ ջատագովում էին որոշակի հարանվանություն եկեղեցու գործողությունն Աստծո Խոսքի հետ համեմատելու փոխարեն: Այսպիսով, մենք պետք է զգույշ լինենք, թե ինչպիսի գրքերից ենք օգտվում:

Վստահ եղեք, որ եկեղեցու պատմության ընթացքում եղել են բազմաթիվ հավատարիմ քրիստոնյաներ, որոնց անունները գրված չեն պատմաբանների կողմից, սակայն նրանց անունները գրված են Երկընքում (Եբր. 12:23):

Իհարկե, այստեղ մարդկանց և իրադարձությունները դիտարկում ենք պատմության տեսանկյունից: Բայց երբ սկսենք Հայտնության

գրքի սերտողությունը, որը գրվել է մոտավորապես մ.թ. 90 թ.-ին, կտեսնենք, որ 2-րդ և 3-րդ գլուխներում Հռոմեական կայսրության, Պապականության, Բողոքականության և այլ իրադարձությունների մասին մարգարեություններ կան, որոնք ուսումնասիրելու ենք 42-րդ և 43-րդ դասերում: Հետևաբար, եկեղեցու պատմության այս սերտողությունն օգնելու է մեզ Հայտնության գրքի 2-րդ և 3-րդ գլուխները հասկանալու մեջ:

2. Քրիստոնեական վաղ եկեղեցին (100-312թթ.)

Մինչ առաջին դարը մոտենում էր իր ավարտին, առաքյալները Երկնային տուն էին կանչվում. այդպիսով եկեղեցիների պահպանումն ու ավետարանչության միջոցով նոր եկեղեցիներ հիմնելու պատասխանատվությունը մնաց եկեղեցու առաջնորդների ուսերին: Այնուամենայնիվ, տեսնում ենք, որ շատ վայրերում քրիստոնեական եկեղեցիներում իշխում էին անհատներ, որոնք հայտնի դարձան եպիսկոպոսներ անունով. կարդում ենք Հռոմի եպիսկոպոսի՝ Կղեմեսի, Անտիոքի եպիսկոպոսի՝ Իգնատիոս Անտիոքացու, Լիոնի եպիսկոպոսի՝ Հիրենեոս Լիոնացու, Կարթագենի եկեղեցու եպիսկոպոսի՝ Կիպրիանոսի, և Եվսեբոս Կեսարացու մասին: Նրանք բոլորը այլ աստվածաբանների հետ միասին կոչվում են «եկեղեցու հայրեր»:

Այդ եպիսկոպոսները ժամանակ առ ժամանակ հանդիպում էին վարդապետական հարցեր քննարկելու համար, որի արդյունքը քրիստոնեական հավատքին վերաբերող մի քանի փաստաթղթերի հռչակումը եղավ, օրինակ՝ Առաքելական հանգանակը, հավատքի Աթանասեսյան դավանանքը և Նիկիական հանգանակը: Նիկիական հանգանակը կգտնեք այս դասաշարի վերջին հոդվածում: Եպիսկոպոսները նաև զբաղված էին՝ որոշելու, թե որ գրություններն են Նոր Կտակարանի կանոնի մաս կազմում: Կանոնը վերջապես համաձայնեցվեց Լավոդիկեի ժողովում մ.թ. 360թ.-ին:

Հռոմեական կայսրերը շարունակեցին քրիստոնեությունը բնաջնջելու իրենց քաղաքականությունը՝ մահապատժի ենթարկելով Իգնատիոսի, Պոլիկարպոսի և Կիպրիանոսի նման աստվածապաշտ մարդկանց: Տասնյակ հազարավոր քրիստոնյաներ կայսրության ողջ տարածքում կորցրին իրենց կյանքն իրենց հավատքի պատճառով,

բայց նրանց փոխարինեցին նոր քրիստոնյաներ: Քրիստոնեության կրակը չէր կարող մարվել, և այն շարունակեց տարածվել ամբողջ կայսրության մեջ և նրա սահմաններից դուրս: Երրորդ դարի վերջում Միջերկրական ծովի շրջանում հարյուրավոր եկեղեցիներ կային, ինչպես նաև այնպիսի երկրներում, ինչպիսիք են՝ արևմուտքից՝ Իսպանիան, Ֆրանսիան, Անգլիան, արևելքից՝ Հորդանանը, Սիրիան, Թուրքիան և Իրաքը:

3. Քրիստոնեության Հռոմեական կայսրության դարաշրջանը (312-590թթ.)

Դեցիուս կայսրը (249-51թթ.) հրահրեց եկեղեցու դեմ կատարված ամենադաժան հալածանքներից մեկը: Նա պարտադրեց զոհաբերություններ կատարել Հռոմի չաստվածներին: Այս դարաշրջանում հազարավոր քրիստոնյաներ մահապատժի ենթարկվեցին, այդ թվում Հռոմի, Անտիոքի և Երուսաղեմի եպիսկոպոսները: Այս հալածանքներն անընդհատ շարունակվում էին, մինչև Դիոկղետիանոսի իշխանության ավարտը (284-305թթ.), ով ինքնակամ հրաժարական տվեց և շարունակեց ապրել իր կալվածքում: Նա կայսրությունը բաժանեց արևելքի և արևմուտքի և իր փոխարեն կարգեց երկու կայսրեր: Փոքր մասշտաբի մի քանի պատերազմներ մղելուց հետո Կոստանդինը՝ արևմտյան կայսրի որդին, 313թ.-ին դարձավ արևմուտքի կայսրը: Եվ քանի որ նա հավատում էր, որ խաչն իր հաջողության գրավականն է, դարձավ անվանական քրիստոնյա և վերջ տվեց քրիստոնյաների դեմ կատաղի հալածանքներին: Այսպես սկիզբ առավ նոր դարաշրջան, որտեղ եկեղեցին և պետությունը մեկ դարձան:

Այնուհետև Կոնստանդինը քրիստոնեության սեփական ոճը սահմանեց: Յուրաքանչյուր քաղաքում նա գեղեցիկ շենքեր կառուցեց քրիստոնեական երկրպագության համար: Քրիստոնյա հոգևորականներն ազատվեցին հարկերից, և կիրակի օրը հայտարարվեց հանգստյան օր: Այս բարեփոխումների արդյունքում եկեղեցականները սկսեցին սատարել քաղաքացիական իշխանություններին և կայսրերին հավատարիմ մնալը նայեցին որպես կրոնական պարտականություն: Իհարկե, սա դուրս է Սուրբ Գրքի ուսմունքից (տե՛ս Դան. 3.28, Գործք 4.19, Ա Պետ. 3:15):

Այս ժամանակ էր, որ Հյուսիսային Աֆրիկայի եպիսկոպոս Դոնատոսը հարց առաջ քաշեց, թե ինչ առնչություն ունի կայսրը եկեղեցու հետ: Կոստանդինը փորձեց ոչնչացնել Դոնատոսին և նրա հետևորդներին, բայց նրան չհաջողվեց դա: Հետո՝ մոտավորապես 318թ.-ին, Աղեքսանդրիայից Արիոս անունով մի հովիվ վիճարկեց Տեր Հիսուսի աստվածության վարդապետությունը, ինչի հետևանքով մեծ պառակտումներ առաջացան: Այս պատճառով Կոստանդինը հանձնարարեց Նիկիայի ժողովը, որը գումարվեց 325թ.-ին: Գերակշռող մեծամասնությամբ համաձայնության եկան, որ Հայրն ու Որդին էությամբ մի են: Այս ժողովի արդյունքում շարադրվեց Նիկիական հանգանակը՝ աստվածաշնչյան հիմնական վարդապետությունների ամփոփ հայտարարագիրը, որը շարունակում է մնալ արևմտյան քրիստոնեության մեծ դավանաբարերից մեկը:

Աթանաս Ալեքսանդրացին (296-373թթ.)՝ իր ժամանակի մեծագույն աստվածաբանն ու առաջնորդը, մասնակցեց Նիկիայի ժողովին և եպիսկոպոս նշանակվեց 328թ-ին: Աթանասը համառորեն պայքարեց Արիոսական հերետիկոսություն դեմ (Արիոսը սովորեցնում էր, թե Քրիստոսը հավասար չէր Աստծուն, հետևաբար հավիտենից գոյություն չուներ, ուստի Երրորդության վարդապետությունը սխալ է): Նա կայսրի հրամանով հինգ անգամ աքսորվեց իր բացահայտումների համար: Սակայն նրա եկեղեցու անդամները միշտ հավատարիմ մնացին և յուրաքանչյուր աքսորից վերադառնալիս ջերմորեն ողջունում էին նրան: Մի անգամ նա աքսորվեց Եգիպտական անապատ: Աթանասը սփոփվում էր՝ սաղմոսներ կարդալով, և քաջալերվում էր՝ դրանց շուրջ խորհրդածելով: Թեև հստակ է, որ Աթանասյան դավանանքը նրա կողմից չէ գրված, սակայն այն արտահայտում է այն վարդապետությունը, որի ուժեղ ջատագովներից մեկն ինքն էր. մասնավորապես Երրորդության ուսմունքը շատ հստակ է ներկայացված այնտեղ:

(Շարունակելի)

❋ ❋ ❋

Նրանց հրավիրի՛ր եկեղեցի

Մատթեոս 9.9-13

Ա՛ի կիրակի օր Բոբը տնից դուրս եկավ, որ եկեղեցի գնա: Այդ ընթացքում նրա հարևանը գոլֆի մականը մեքենայի մեջ էր դնում:

- Բարի լույս, Բո՛բ, - ասաց հարևանը, - արի՛ այսօր միասին գոլֆ խաղանք:

Բոբը վճռականորեն պատասխանեց.

- Ո՛չ, շնորհակալ եմ: Ես քրիստոնյա եմ ու ամեն կիրակի եկեղեցի եմ գնում:

Երկար դադարից հետո գոլֆ խաղացողն ասաց.

- Գիտես, Բո՛բ, հաճախ եմ մտածում քո ու քո եկեղեցու մասին: Իրականում հիանում եմ քո հավատարմությամբ: Ես քեզ շատ անգամներ եմ հրավիրել ինձ հետ գոլֆ խաղալու, բայց դու երբեք ոչ մի անգամ ինձ եկեղեցի չես հրավիրել:

Ի՜նչ ցնցում էր դա Բոբի համար: Ինչպիսի՜ ցնցող նորություն: Այս պատգամը ներկայիս եկեղեցիների բոլոր «Բոբերի» համար է:

Այսօր Հիսուսը մեզ՝ բոլորիս մարտահրավեր է ուղղում այնպես, ինչպես իր ժամանակներում ուղղեց փարիսեցիներին.

«Ողորմություն եմ կամենում, այլ ոչ թե զոհ: Որովհետև ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ մեղավորներին» (Մատթ. 9.13):

Այլ կերպ ասած՝ Աստծո ցանկությունն այն չէ, որ մենք պարզապես կրոնական գործեր կատարենք և ժամանակ առ ժամանակ շնորհակալություն հայտնենք Նրան մեր փրկության համար: Ավելին՝ Նա ուզում է, որ մենք ողորմություն ցուցաբերենք ու սիրենք նրանց, ովքեր փրկության կարիքն ունեն:

Արդյոք իրականում մենք հոգո՞ւմ ենք մեր շուրջը գտնվող մարդկանց մասին: Երբևէ մտածե՞լ ես, թե ինչպիսին կլիներ մարդկանց

վախճանն առանց Քրիստոսի:

Ամեն օր շատ մարդիկ են մահանում առանց Քրիստոսի. նրանցից ոմանց ճանաչում ես: Բայց ավելի շատ են նրանք, ովքեր տակավին ողջ են: Մենք շրջապատված ենք այնպիսի մարդկանցով, որոնք Քրիստոս չունեն:

Համոզված եմ, որ շուրջդ շատերը կան, որոնք երբեք հրավեր չեն ստացել Հիսուսին հանդիպելու: Հույս ունեմ, որ Բոբի ու նրա հարևանի մասին պատմությունը քո մեջ ավելի շատ սրտացավություն կարթնացնի, քան քո կրոնական սովորույթներն ու մերժված լինելու վախը:

Աղոթի՛ր քո շուրջը գտնվող ընտանիքների և մարդկանց համար: Խնդրի՛ր Աստծուն, որ օգնի քեզ՝ սիրել նրանց, ու քեզ քաջություն տա, որ նրանց հետ խոսես Աստծո սիրո մասին և պատմես, թե մեր փրկության համար ինչ է արել Հիսուսը խաչի վրա և թե ինչ կանի նրանց համար, եթե Հիսուսին հրավիրեն իրենց կյանքի մեջ:

Հովիվ՝ Հովսեփ Հովսեփյան

Քաղված՝ «Աստծո արհեստանոցը» գրքից

Ապաշխարեցե՛ք

Գործք Առաքելոց 2:38

Աստվածաշունչը սովորեցնում է, որ ապաշխարությունն անհրաժեշտ է փրկության համար: Ի՞նչ է նշանակում սուրբգրային ապաշխարություն: Ի՞նչ նկատի ուներ Պետրոսը, երբ բազմությանն ապաշխարելու կոչ ուղղեց: Գործք Առաքելոց 2-րդ գլխում տեսնում ենք, որ Պետրոսը բազմությանը Հիսուսի մասին էր քարոզում: Երբ մարդիկ լսեցին Հիսուսի մասին ճշմարտությունը, Պետրոսին հարցրին, թե ինչ պետք է անեն: Պետրոսը պատասխանեց՝ ասելով, թե պետք է ապաշխարեն:

Նախևառաջ եկե՛ք սահմանենք «ապաշխարել» բառն այնպես, ինչպես այն օգտագործված է բնօրինակ լեզվում: «Ապաշխարել» բա-

ոը հունարեն «metanoesate» բառն է, որ նշանակում է՝ փոխել աշխարհայացքը կամ տեսակետը, կամ ունենալ սրտի փոփոխություն: Հետևաբար, ապաշխարել նշանակում է ինչ-որ բան թողնել ուրիշը ձեռք բերելու համար: Ուստի Պետրոսն ի՞նչ նկատի ուներ, երբ ժողովրդին ապաշխարելու կոչ արեց: Արդյոք մարդիկ պետք է հրաժարվեի՞ն իրենց կյանքում եղած որոշակի մեղքերից: Ինչի՞ց պետք է ապաշխարեին:

Շատերը ապաշխարել եզրույթը հասկանում են որպես մեղքերից դարձի գալ: Սա ապաշխարության սուրբգրային սահմանումը չէ: Աստվածաշնչում ապաշխարել նշանակում է՝ «միտքը փոխել» (Մատթ. 3.2, 4.17, Գործք 5:31, 17.30): Եթե ապաշխարելը փրկվելու համար մեղքերից դարձի գալ նշանակեր, ապա կասկածում եմ, որ որևէ մեկը կկարողանար փրկություն գտնել, քանի որ մեզանից ոչ ոք այս իմաստով չի կարողացել ապաշխարել: Ոչ ոք վերջնականապես դարձի չի եկել մեղքից, այլ շարունակաբար վերադառնում է այն նույն մեղքին, որից դարձի էր եկել: Քանի որ ապաշխարել նշանակում է ինչ-որ բան թողնել ուրիշ բան մնայուն կերպով ձեռք բերելու համար, հետևաբար ապաշխարությունը չի կարող մեղքից դարձի գալ նշանակել: Այսպիսով, ապաշխարել նշանակում է դարձի գալ սխալ հավատալիքից, սխալ աշխարհայացքից կամ սխալ մտածելակերպից: Անշուշտ, Աստվածաշունչը նաև ասում է, որ ճշմարիտ ապաշխարությունը հանգեցնում է գործողությունների փոփոխության (Ղուկ. 3.8-14, Գործք 3:19):

Ի՞նչ կապ կա ապաշխարության և փրկության միջև: Անձը պետք է փոխի իր միտքը Հիսուս Քրիստոսի նկատմամբ: Պենտեկոստեի օրը (Գործք 2-րդ գլուխ) Պետրոսն իր քարոզն ամփոփեց՝ ժողովրդին ապաշխարելու կոչ ուղղելով (Գործք 2:38): Ինչի՞ց ապաշխարել: Պետրոսը Հիսուսին մերժողներին կոչ արեց, որպեսզի փոխեն իրենց միտքը Հիսուսի նկատմամբ՝ ընդունելով Նրան որպես «Տեր և Օծյալ» (Գործք 2.36): Պետրոսը կոչ արեց մարդկանց փոխել իրենց միտքը Հիսուսի նկատմամբ. Նրան մերժելու փոխարեն հավատքով ընդունել Նրան՝ որպես Մեսիայի և Փրկչի: Հետևաբար, ապաշխարել նշանակում է սխալ հավատալիքներից, Աստծո մասին սխալ ընկալումից, Աստծո մասին սխալ տեսակետներից կամ Հիսուսի Անձի մասին կազ-

մած թյուր կարծիքներից դարձի գալ և դառնալ ճշմարտությանը, որը Հիսուսն է, դառնալ ճշմարիտ ուսմունքին և Աստծո Խոսքին:

Ապաշխարությունն ու հավատքը պետք է միաժամանակ կատարվեն: Ապաշխարությունն ու հավատքը նույն մետաղադրամի երկու կողմերն են: Անհնար է Հիսուս Քրիստոսին՝ որպես Փրկչի հավատալ, եթե նախապես չեք փոխել ձեր միտքը Նրա Անձի և կատարած գործի նկատմամբ: Անկախ այն բանից, թե ձեր ապաշխարությունը Քրիստոսին դիտավորյալ մերժելուց էր, թե անտեղյակությունից կամ անտարբերությունից, այն իր մեջ ներառում է մտքի փոփոխություն: Այն նշանակում է ապաշխարել ամեն տեսակի հոգևոր թյուրըմբռնումից, որ ունեիք հոգևոր հարցերի կամ Աստծո նկատմամբ: Այն նշանակում է ապաշխարել այն ամեն բաներից, որոնց ապավինել էիք Երկինք գնալու կամ Աստծուն հաճեցնելու համար, և միայն Հիսուսին ապավինել, ուրիշ ոչ ոքի և ոչնչի: Չափազանց կարևոր է, որ հասկանանք, թե ապաշխարությունն ինչ-որ գործ չէ, որը եթե կատարենք, փրկությունը կվաստակենք:

Չնայած որ ապաշխարությամբ փրկությունը չենք վաստակում, բայց ապաշխարությունը հանգեցնում է փոխված գործերի: Անհնար է իրական և ամբողջական մտքի փոփոխություն ունենալ առանց դրա՝ գործերի վրա ազդեցություն ունենալու: Աստվածաշնչում ապաշխարությունը միշտ հանգեցնում է վարքի փոփոխության: Ահա թե ինչու Հովհաննես Մկրտիչը մարդկանց կոչ արեց՝ ասելով. «Ապաշխարության արժանի պտուղ բերե՛ք» (Մատթ. 3.8): Այն անձը, ով իսկապես ապաշխարել է Քրիստոսին մերժելուց դեպի Քրիստոսին հավատալը, անպայման փոխված կյանքի ապացույցներ կունենա իր կյանքում (Բ Կորնթ. 5.17, Գաղ. 5.19-23, Հակ. 2.14-26): Սուրբգրային ապաշխարություն նշանակում է փոխել միտքը Հիսուս Քրիստոսի վերաբերյալ և փրկության համար հավատքով դիմել Աստծուն (Գործք 3.19): Մեղքից (մեղքի մեջ ապրելուց, մեղավոր կենսակերպից, հին բնության մեջ մնալուց) դարձի գալն ապաշխարության սահմանումը չէ, այլ Տեր Հիսուս Քրիստոսի նկատմամբ իրական հավատքի ապաշխարության արդյունքը:

Ռաֆֆի Չափարյան

Հարությունն անհնար է կորցնել

Գերմանիայում մի գերեզման կա, որի վրա կողք կողքի դրված են հսկայական մարմարե ու գրանիտե քարեր և ամրացված են ծանր երկաթե ճարմանդներով: Սա պատկանում է մի կնոջ, որը չէր հավատում մեռելների հարությանը: Սակայն զարմանալիորեն իր կտակում փափագ էր հայտնել իր գերեզմանն այնքան ապահով սարքել, որ եթե նույնիսկ հարություն տեղի ունենա, իրեն չհասնի: Նրա շիրիմնաքարի վրա արձանագրված է. «Այս գերեզմանը երբեք չպետք է բացվի»:

Ժամանակի ընթացքում քարերի տակ պահված մի հունդ սկսեց տակից աճել: Կամաց-կամաց այն դուրս եկավ հողից: Երբ կոճղը հաստացավ, քարի մեծ կտորները շարժվեցին, և երկաթե ճարմանդները քանդվեցին: Փոքր հունդը մեծ ծառ դարձավ և քարերը մի կողմ հրեց:

Հունդի պարունակած կենդանի հուժկու զորությունը պարզ ցոլացումն է աստվածային այդ զորեղ ստեղծագործ խոսքի, որի միջոցով մի օր կենդանանալու են բոլոր նրանք, ովքեր գերեզմաններում են: Այն նաև կենդանացնելու է բոլոր նրանց, ովքեր ծովերում ընկղմվեցին, այրվեցին կամ այլ կերպով կործանվեցին: Սա անելը դժվար չէ Նրա համար, ով ոչինչից ստեղծեց ամբողջ տիեզերքը միայն խոսքով:

Անհավատությունը չի կարող կանգնեցնել հարությունը: Սակայն հարուցյալ Քրիստոսում եղած հավատքը բացում է օրհնության դռներ, և Իր հարությունը մեզ համար ապահովում է փառավոր մի մարմին ու երկնային տուն: Նոր մարմիններով վերստին միանալու ենք մեր հարուցյալ հարազատներին՝ Հիսուսի հետ հավիտյան ապրելու:

Պողոս առաքյալն ասում է. «Հուսալով Աստծուն, ինչպես իրենք էլ ընդունում են, թե մեռածների հարություն պիտի լինի՝ թե՛ արդարների, և թե՛ մեղավորների համար: Եվ հենց սրա համար եմ ջանում, որ մշտապես խիղճս մաքուր լինի Աստծո և մարդկանց առաջ» (Գործք 24:15-16):

Քաղված

Քաջացի՛ր, քանզի Աստված ապահովում է

Աստված ապահովեց

Աբրահամին պատվիրվեց զոհաբերել Իսահակին, և նա այդ վայրն անվանեց «Տերը կտեսնե» (Ծնն. 22): Ծննդոց 22-ի պատմությունն ամենանշանակալից ու զգայացունց անցքերից մեկն է Ծննդոցում: Իսահակին զոհելու հրամանը, զոհաբերության վայր բարձրանալիս Աբրահամի և Իսահակի տխրությունը, նրան սրտի ցավով կապելն ու զոհասեղանին դնելը և վերջին պահին Երկնքից եկող միջամտությունն այս պատմությունը դարձնում են լավագույններից մեկն Աստվածաշնչում:

Հավատք և հույս

Ծննդոց 22-ում կարդում ենք Աբրահամի հավատքի վերջին փորձության մասին, որը համեմատելի է տունն ու ընտանիքը թողնելու սկզբնական կանչի հետ: Թեպետ ասվում է, որ դա փորձություն էր Աբրահամի համար, բայց Աստծո հրամանը միանգամայն իրական էր: Իսահակից էր կախված օրհնության բոլոր խոստումների իրագործումը: Սեփական զավակի սիրո ու առ Աստված հնազանդության միջև մասնատված՝ Աբրահամը կանգնել էր դժվարին ընտրության առջև: Տեսնում ենք, թե ինչպես են հավատքն ու հույսը հաղթում վախին ու կասկածին, մինչև դանակը կբարձրանար Իսահակին զոհելու համար: Այս կերպ Աբրահամը ցույց տվեց, որ պատրաստ էր Աստծո կանչը վեր դասել ցանկացած այլ նվիրումից, և հենց այդ պահին փորձությունն ավարտվեց:

Գառը պատրաստ էր

Իսահակի փոխարեն զոհաբերվեց գառ, և հրեշտակը հայտնեց, որ Աբրահամի հնազանդության քայլը փոխեց խոստումների կարգավիճակը: Դրանք դարձան ուխտով հաստատված առհավատչյա անհամար շառավիղներին, երկրի նվաճում ու օրհնություններ նրան ու նրա միջոցով աշխարհի բոլոր ազգերին: Ծննդոց 22:16-18-ում կարդում ենք Աստծո վերջին խոսքերն ուղղված Աբրահամին, և դրանց նշանա-

կությունը չպետք է անտեսել: Այդ պահից սկսած՝ Աստծո խոստման իրագործման վերաբերյալ կասկած չկար: Աբրահամի հավատքի կատարումը գառն էր (Ծննդ. 22:13), սակայն դրա վերջնական իրագործումը Աստծո Գառն է (Հովհ. 1:29, 36):

Աստծո զոհաբերող սերը

Նորկտակարանային տեսանկյունից Իսահակի զոհաբերությունն ավելին էր, քան բացառիկ օրինակ մեկի, ով իրեն անմնացորդ հնազանդությամբ նվիրում է Աստծուն (Եբր. 11:17-19): Դա Աստծո զոհաբերող սիրո նկարագիրն է: Ինչպես Աբրահամն իր միակ որդուն տվեց որպես զոհ, նույն կերպ Հայրը «Իր Որդին էլ չխնայեց» այս աշխարհի համար (Հռոմ. 8:32ա, Հովհ. 3:16): Վայրը, որտեղ Տեր Հիսուսը՝ Աստծո Որդին, մահացավ, Աստծո ապահովման վայրն է: Ինչպես գառը զոհվեց Իսահակի փոխարեն, նույն կերպ Հիսուսն Իր կյանքը՝ որպես փրկագին, տվեց շատերի համար (Մարկ. 10:45): Տեր Հիսուսը ողջ գինը վճարեց՝ մեզ մեղքի ու մահվան կապանքներից արձակելու համար:

Աստված ապահովում է

«...Այլ մեզ բոլորիս համար մահվան մատնեց Նրան, էլ ինչպե՞ս Նրա հետ ամեն բան չի շնորհի մեզ» (Հռոմ. 8:32բ): Եթե Աստված Իր լավագույնը՝ սիրեցյալ Որդուն նվիրեց՝ մեզ փրկելու համար, ապա, անշուշտ, կտա նաև ամեն անհրաժեշտը՝ Գողգոթայի խաչի վրա սկսած գործն ավարտելու համար: Քաջալերվենք, քանզի Աստված չի դադարել ապահովելուց: Նա Աբրահամի Աստվածն է և մեր Աստվածը նույնպես: Փիլիպպեցիներին ուղղված թղթում Պողոս առաքյալը գիտեր այս ճշմարտությունը, ուստի քաջալերված էր և ի վիճակի՝ քաջալերելու ուրիշներին: Նա համոզված էր. «Բայց իմ Աստվածը ձեր բոլոր կարիքները պիտի հոգա Փառքի մեջ՝ Իր ունեցած հարստության չափով՝ Քրիստոս Հիսուսի միջոցով» (Փիլ. 4:19):

Դոկտ. Չեսլով Բասսարա
(czeslaw7@eta.pl, www.proword.eu)

Աստծո արդարությունը

Աստծուն հավատացողը մեծ հուսախաբություն է ապրում, երբ զգում է, որ Աստված իր աղոթքը չի լսում կամ իրեն չի պատասխանում: Արդյոք հերի՞ք չէ այն, որ մեր շուրջը գտնվող մարդիկ չլսեն մեր ձայնն ու պատասխան չտան մեզ, Աստվա՞ծ էլ չլսի... Մե՜ծ հուսախաբություն է:

Երբ անարդար խոսքերի ու գործերի զոհը դառնանք, կամ մեր տունը կողոպտվի, մեր ընտանիքն անարգվի, կամ մեր իրավունքները խլվեն, և ականատես մարդիկ ձայն չհանեն, Աստծուց արդարություն ենք պահանջում և եթե զգանք, որ արագ լուծում չի տրվում, կարծում ենք, թե Աստված մեր կողմից չէ, չի լսում, անտարբեր է կամ ներկա չէ: Փորձության վիճակ է, և կարծում ենք, թե Աստծո մեծությունը կամ սերը մեր ուզած ձևով և մեր ուզած ժամանակ կարող ենք չափել:

Երբ ամեն անգամ աղոթում ենք Աստծուն և պատասխանի ենք սպասում, ուզում ենք, որ Աստված մեր ուզած ձևով պատասխանի, և եթե Նա ուրիշ ձևով է պատասխանում, կարծում ենք, թե Նա պատասխան չի տվել: Հավատացյալի ամենակարևոր կարիքներից մեկն Աստծո ձայնին վարժվելն է Նրա Խոսքի, Հոգու, Նրա զավակների, կյանքի պարագաների և անձնական փորձառությունների միջոցով:

Ղուկաս ավետարանիչն ամուսին կորցրած մի որբևարի կնոջ օրինակ է ներկայացնում այս հատվածում, որպեսզի բացատրի, թե Աստված որքան գթացող է: Իսկ այս հատվածն ինչո՞ւ է գրված. որովհետև շատ քրիստոնյաներ Հիսուսի ժամանակ և մեր ժամանակներում էլ, եթե տեսնեին, որ Աստված անմիջապես չի պատժում անարդարություն կատարողին, Աստծո արդարության մասին կասկածով կխոսեին: Մարդիկ կջանային Աստծուն պայմաններ դնել և փորձել Նրան. «Եթե արդար ես, իմ ուզած ժամանակ ուզածս ձևով միջամտիր»:

Պատմությունը դատավորի մասին է, որ արդարություն կատարելու համար պաշտոն էր ստանձնել: Դատավորը մեկն է, ով կարող է ճիշտը սխալից և արդարին անարդարից զանազանել ըստ օրենքի: Սակայն այս դատավորն իր պաշտոնին հավատարիմ չէր, այսինքն՝ ար-

դարություն կատարելն իրեն չէր հուզում (2-րդ համարում գրված է, որ նա Աստծուց չէր վախենում ու մարդկանցից չէր ամաչում):

Ահա մի որբևայրի կին ամեն օր թակում է դատավորի դուռը՝ խընդրելով, որ իրեն իրավունք տրվի: Ուրախ ենք, որ ի վերջո դատավորը, այս կնոջից հոգնելով, իրավունք է տալիս նրան:

Այս պատմությունը կարդացողը կարող է ասել՝ ուրեմն մենք էլ այս որբևարու պես մեր իրավունքից չհրաժարվենք, դռներ թակենք և եթե անդադար աղոթենք, կարող ենք Աստծուն համոզել, որ ենթարկվի մեր կամքին: Սակայն ո՛չ. քո այսօրվա դասն Աստծո արդարության և այս անաստված դատավորի արդարության տարբերությունն է:

Ճիշտ է, որ դատավորը տալիս է որբևայրու իրավունքը և արդարությամբ է վարվում, սակայն տակավին մնում է անարդար, որովհետև արդարությունն իր անձնական շահի, ոչ թե արդարության համար է գործում:

Այս դատավորն իրավունք է գործում ոչ թե արդար լինելու համար, այլ իր անձնական հանգստի, որպեսզի ևս մեկ անգամ որբևարի կինը, դուռը թակելով, իր գլուխը չցավեցնի:

Այսինքն՝ դատավորն ո՞ւմ դատն է պաշտպանում, որբևարո՞ւ, թե՞ իր անձի: Նա պաշտպանում է որբևայրու դատը միայն այն ժամանակ, երբ ինքն էլ դրանում շահ է գտնում:

Դատավորը շատ լավ գիտեր, որ իր ամուսնուն կորցրած կինը, ում հողը, տունը, զավակը կամ ուրախությունը կարող են իրենից խլված լինել, ուրիշներից ավելի կարիք ունի իր իրավունքները ստանալու, սակայն նա քարացած սրտով մի անձնասեր ու կարճատես անձի պես չի համոզվում, որ պարտավոր է այդ կնոջ դատը տեսնել: Սակայն իր մեկ գիշերվա հանգստի համար պատրաստ է կնոջն իր պահանջածը տալ:

Նույնն է պարագան քաղաքական ընտրությունների ժամանակ... Օրինակ՝ քաղաքական մարդիկ Հայկական հարցի մասին շատ ավելի խոսում են այն նահանգներում և քաղաքներում, որտեղ հայերն են բնակվում, բայց ոչ այն պատճառով, որ նրանք հետաքրքրված են արդարության գործերով, այլ որովհետև հայոց քվեի կարիքն ունեն:

Ի՞նչ արդարություն է այն, որ քվեով կամ դրամով է գնվում: Ի՞նչ իրավունք է այն, որ գիշերվա հանգստի խոստումով է ստացվում: Ո՞ւր է արդարությունը այն դատավորի, որն Աստծուց չի վախենում ու մարդկանցից չի ամաչում:

Երբ դատավորը օրենքների օրենքը և ամեն օրենքի օրենսդրին չի ճանաչում և թաքնվում է իր պաշտոնի թիկունքում, ինչպե՞ս կարող է արդար լինել: Այնպիսի դատավորը կարող է ժամանակ առ ժամանակ իր տրամադրության կամ շահի համեմատ իրավունք անել և արդարություն գործել, բայց բնավ արդար չի կարող լինել, որովհետև Հռոմ. 5:14-ից գիտենք, որ մարդը հավատքով է արդարանում և Աստծո, մարդկանց ու ինքն իր հետ խաղաղություն ունենում:

Կա նաև Աստծո արդարությունը: Աստծո արդարությունը չի նայում ժողովրդի դրամին, քվեին, պատիվ տալուն: Աստծո արդարությունը պարզապես իրավունք տալու կամ ստանալու վրա չէ հիմնված, այլ Աստծո սիրո վրա, այն սիրո վրա, որով մարդկությունը պատժելու փոխարեն Իր Միածնին ուղարկեց մարդկանց համար և Իր աստվածային իրավունքը մոռացավ: Աստված նախընտրեց, որ մարդիկ արդարանան Իր առջև, քան Ինքը նրանցից իրավունք պահանջի: Ուրեմն՝ Աստված պարզապես իրավունքների Աստված չէ, հապա արդարության Աստված: Մեզ օրենքին ենթարկելու փոխարեն Նա հաշտեցնում է օրենքը ստեղծողի հետ և խաղաղություն ստեղծում:

Աստծո արդարությունը կարող է մեր նախընտրած հստակությամբ, ուզած ժամին և երազած ձևով չհայտնվել, բայց հավատում ենք, որ երբ Մարդու Որդին գա և մեր հոգիները հավիտենապես գրկի, այն ժամանակ կտեսնենք արդարության իսկական դեմքը և ավելի կհամտեսենք արդարության պտուղները:

Աղոթենք ոչ միայն մանր-մունր իրավունքներ ստանալու համար, այլև աղոթենք, որպեսզի Աստված Ինքն Իրեն ավելի հայտնի մեզ Խոսքով ու Հոգով:

Պատ. Փոլ Հայտոսթյան

Քաղված՝ «Հատընտիր հոգևոր պատգամներ» գրքից

Խաչի ազատարար շուքը

Ոմանք կարծում են, թե հրաշքների շրջանն անցել է, սակայն Աստծո Խոսքն ասում է, որ Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Ուստի ժամանակ առ ժամանակ զարմանահրաշ դեպքերի մասին ենք լսում, որոնք հիացնում են մեզ ու ցույց են տալիս Աստծո գերբնական միջամտությունը:

Մի անհավատ ընտանիքում մեծացած երիտասարդը մարզվում էր որպես օլիմպիական լողորդ: Նա ջանք էր թափում՝ հասնելու իր նպատակակետին՝ վստահելով իր թիկնեղ կազմվածքին ու անխոնջ աշխատանքին: Այս խոստմնալից համալսարանականը մի քրիստոնյա բարեկամ ուներ, որը միշտ իրեն պատմում էր Աստծո մասին և բացատրում Հիսուսի՝ խաչի վրա կատարած փրկությունը: Թեև անհավատն ուշադրություն չէր դարձնում բարեկամի ոգեշունչ խոսքերին, սակայն ակամայից լսում էր նրա ասածները:

Մի գիշեր երիտասարդն իր հաճախած համալսարանում գտնվող մեծ լողավազանը գնաց՝ փորձ անելու: Թեև շենքում մութ էր, բայց առաստաղի վրա զետեղված ապակե մեծ պատուհաններից թափանցում էր լուսնի պայծառ լույսը, և այն բավարար էր իր համար: Նա բարձրացավ ամենաբարձր աստիճանին, որտեղից ուզում էր ցատկել ավազանի մեջ: Մեջքը դեպի ավազանը շրջած՝ թևերը տարածեց և մոտեցավ տախտակամածի եզրին: Մինչ պատրաստվում էր ջրի մեջ նետվելու, հանկարծ դիմացի պատի վրա տեսավ իր մարմնի թևատարած շուքը, որ խաչի ձև ուներ: Այդ վայրկյանին միտքը եկան հոգևոր բարեկամի պատմածները Հիսուս Քրիստոսի մասին, և մտովի տեսավ Հիսուսին, որ խաչի վրա մահացել էր իր փոխարեն: Նույն ժամանակ այս անհավատ համալսարանականը ներքին մղում ունեցավ՝ տեղում ծնրադրելու և ինքն իրեն Աստծուն հանձնելու: Աղոթելուց հետո նա գոհունակությամբ ոտքի կանգնեց: Այդ վայրկյանին սրահի հսկիչներից մեկը վառեց լողավազանի լույսերը, և երիտասարդը տեսավ, որ ավազանը դատարկ է. ջուրը դատարկել էին որոշ նորոգությունների համար:



Այս նորահավատ երիտասարդը երկյուղածությամբ ուշադրություն դարձրեց այն բանին, որ Աստված իրեն վերահաս մահից մազապուրծ ազատեց: Նա երախտագիտության հոգով ուխտեց ապրել այն Տիրոջ համար, որ իր տեղը մահացել էր Գողգոթայի խաչի վրա:

«Աստվածների մեջ, ՏԵՐ, ո՞վ է Քեզ նման, ո՞վ է Քեզ նման, սրբության մեջ փառավորված, օրհնություններով սքանչելի, հրաշքներ գործող» (Ելից 15:11):

Քաղված՝ «Օրհնաբեր նռնենին» գրքից